

Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի  
2015թ. նիստերի արձանագրություններ

Արձանագրություն 3

2015թ. ապրիլի 3-ին տեղի ունեցավ Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի ընդլայնված նիստ՝ նախագահությամբ Ռ.Հակոբյանի, քարտուղարությամբ՝ Թ.Ասոյանի:

Նիստին ներկա էին գիտխորհրդի 31 անդամներից 28-ը:  
Օրակարգ՝

1.ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի 2014-2015 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի գործունեության հաշվետվության և 2-րդ կիսամյակի գործողությունների ծրագրի ներկայացում:

/զեկուցող՝ դեկան Մ. Ավագյան/

2.ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի ինքնավերլուծության և ինքնագնահատման ընթացքի ներկայացում:

/զեկուցող՝ դեկան Մ. Ավագյան/

3.Ուկրաինայի Հանրապետության Կիևի պոլիտեխնիկական ինստիտուտ գործուղման արդյունքների մասին:

/զեկ՝ Ա.Ապրոյան/

4.ԳԴՀ-ի Կորլեց-Լանդաու համալսարան գործուղման արդյունքների մասին:

/զեկ՝ Մ.Խաչատրյան Ա.Նանագուլյան/

5.Ընթացիկ հարցեր:

Օրակարգի 1-ին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ բնագիտական ֆակուլտետի դեկան Մ.Ավագյանը: Նա ասաց, որ բնագիտական ֆակուլտետում աշխատանքները տարվել են համաձայն ֆակուլտետի զարգացման հայեցակարգի և կոռուպցիայի դեմ տարվող պայքարի ռազմավարական ծրագրի: Աշխատանքները ընթացել են համակարգված, ցուցաբերվել է միասնական մոտեցում: Հրավիրվել են ֆակուլտետի խորհրդի նիստեր, որոնցում քննարկվել են ուսումնական,կազմակերպչական գործընթացներին վերաբերող բազմաթիվ հարցեր: Այնուհետև զեկուցողն անդրադարձավ 2014թ. ընդունելությանը: Նշվեց, որ ուսանողների սակավաթվությունը

հիմնականում պայմանավորված է եղել միասնական քննու-թյուններին ցածր միավորներ ստանալով: Ներկայացվեցին առաջադիմության ցուցանիշներն ըստ բաժինների, կուրսերի և ֆակուլտետի: Ֆակուլտետային կյանքը հետաքրքիր են դարձրել կազմակերպված բազմաբնույթ միջոցառումները՝ այդ թվում նվիրված Ընտանիքի

տարվան, Սպիտակի երկրաշարժին, և ֆակուլտետային ու հանրապետական գիտաժողովները: Ուշադրություն է դարձվել պրոֆեսորադասա-խոսական անձնակազմի համալրման հարցերին:

Ուսումնական գործընթացը հաջողությամբ կազմակերպելու նպատակով վերանայվել են ուսումնական պլանները, թարմացվել են առարկայական ծրագրերը, դրանք համապատասխանեցվել են ուսուցման 16-շաբաթյա տևողությանը: Ձևավորվել է լաբորատորիա, ձեռք են բերվել սարքավորումներ և դասագրքեր, ֆակուլտետը մասնակցել է միջազգային ծրագրերի, որոշ ուսանողներ սովորել են այլ երկրներում: Այնուհետև ներկայացվեց 2-րդ կիսամյակի գործողությունների ծրագիրը:

Անցնելով օրակարգի 2-րդ հարցին՝ ինքնավերլուծությանը, Մ.Ավագյանը նշեց, որ աշխատանքն այդ ուղղությամբ միասնական ջանքեր է պահանջում, և ողջ կոլեկտիվն է ձեռնամուխ եղել դրա իրականացմանը: Արդեն այն գրեթե ավարտված է, մնացել է որոշ շտկումներ ու լրացումներ կատարել:

Օրակարգի 3-րդ հարցի՝ Ուկրաինայի Հանրապետության Կիևի պոլիտեխնիկական ինստիտուտ գործուղման մասին զեկուցեց պրոռեկտոր Ա.Ապրոյանը: Նա ներկայացրեց միջազգային մի շարք ծրագրեր, որոնց համագործակցում է նաև Գավառի պետական համալսարանը: Նշեց, որ ստացվել են համաձայնագիր կնքելու, դիպլոմների երկկողմանի ճանաչման, ուսանողների փոխանակման առաջարկներ:

Ս.Խաչատրյանը և Ա.Նանագուլյանը ներկայացրին ԳԴՀ-ի Կոբլեց-Լանդաու համալսարան գործուղման արդյունքները: Անցկացվել է 3-օրյա աշխատաժողով շնորհանդեսներով՝ նվիրված համալսարան-գործատու հարաբերություններին, հետագա ծրագրերին, գործնական գրություններ կազմելու հմտություններին:

Ընթացիկ հարցերը վերաբերում էին ինքնավերլուծությանը, ծրագրերում և ուսպլաններում ժամաքանակների համապատասխանեցմանը, ֆակուլտետային և ամբիոնային փաստաթղթերի կարգավորմանը, Մեծ եղեռնի 100-ամյա տարելիցին նվիրված պաստառների մրցույթի կազմակերպմանը:

Զեկուցումների շուրջ ելույթ ունեցան գիտխորհրդի անդամները:

Հիմք ընդունելով զեկուցումներն ու ելույթները՝ գիտխորհուրդը

Որոշեց՝

1.ԲՆՖ դեկան Մ.Ավագյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

2.Հավանություն տալ ԲՆՖ դեկան Մ.Ավագյանի ներկայացրած գործողությունների ծրագրին:

3. ԲՆՖ դեկան Մ.Ավագյանի զեկուցումը ֆակուլտետում ներքին գնահատման և ինքնավերլուծության ուղղությամբ տարվող աշխատանքների մասին ընդունել ի գիտություն:

4.Ա.Ապրոյանի զեկուցումն ընդունել ի գիտություն:

5.Ս.Խաչատրյանի և Ա.Նանագույանի զեկուցումներն ընդունել ի գիտություն:

6.Հանձնարարել դեկանատներին և ամբիոններին իրականացնել փաստաթղթերի ստուգումներ՝ թերությունները վերացնելու նպատակով:

7.Հանձնարարել հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժնին, դեկանատներին, ուսանողական ինքնակառավարման մարմիններին կազմակերպել և անցկացնել պաստառների մրցույթ՝ նվիրված Մեծ եղեռնի 100-ամյա տարելիցին:

Գիտխորհրդի նախագահ՝ Ռ.Հակոբյան

Գիտքարտուղար՝

Թ.Ասոյան